ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԵԹՈՎՊԻԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒ
ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻՆ

ԵԹՈՎՊԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻ
ԳՈՐԾԱԴԻՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՆՈՐԻՆ ՍՐԲԱԶՆՈՒԹՅՈՒՆ
ԱԲԲԱ ԷԼԻՍԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Ադիս Աբեբա

Խոր վշտով տեղեկացանք Ձեր հեռագրից Եթովպական Ուղղափառ Եկեղեցու պետ Նորին Սրբություն Աբունա Թեքլե Հայմանոթ Պատրիարքի անժամանակ մահվան լուրը: Այս տխուր առիթով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և անձամբ Մեր անունից հղում ենք Մեր խորագագաց ցավակցությունը Եթովպական Եկեղեցու Սուրբ Սինոդին, հոգևոր սպասավորներին, ինչպես նաև եթովպացի ողջ հավատացյալ ժողովրդին:

Սուրբ Էջմիածնի Իջման Սեղանի առաջ աղոթում ենք հանգուցյալ Պատրիարքի արդար հոգու փրկության և խաղաղության համար: Թող բարին Աստված քաղցրությամբ ընդունի նրա հոգին արդարների դասում, և Սուրբ Հոգին մխիթարություն պարգևի Եթովպական Եկեղեցու հոգևոր դասին և հավատացյալ ժողովրդին:

Կիրակի, 12 հունիսին, Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում կատարվելու է մասնավոր հոգեհանգստյան պաշտոն Մեր հանգուցյալ եղբոր՝ Աբունա Թեքլե Հայմանոթի հոգու խաղաղության համար:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
7 հունիս 1988 թ.